

ԱՌՆԳԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԱՐԻԱՍՏՈՒԹԻՒՆ.

Ատեղծողին վրայ կնայեմ ու նորա մխիթարիչ խօսքին. նորա վրա յոյս կզննեմ, նա է իմ ամուր պարխապս: Արդարութեան ու ճշմարտութեան հետեւիլ, փրկչութեան հոգւոյն ապրելն յաւիտեանս իմ պատուիրանս լինի: Ի՞նչ ուրիշ բան կարող է ինձ զողացնել, երբ որ փորձութիւնն ինձ սպառնայ: Թէ՛ փշոտ, Թէ՛ նեղ լինի ճշմարտութեան նսնապարհն, բայց եւ այնպէս այս աշխարհիս արդիւններէն ու նեղութիւններէն հոգիս արձակուած, ազատօրէն կալանայ դէպ ի վեր. ինձ երկնային բարձունքէն դրաւում, ձգումէ՛ դէպի ինքն մի հրաշալի յոյս: Հօրս մօտը պիտի երթամ, երբ որ սիրտս փորիս մէջ հալի, երբ որ աչքս փակեմ այս աշխարհիս:

Ասան արծուին թէ, թո՛ղ բարձր ժայռերի վրայ քո շինած բոյնդ, ո՛վ թագաւոր թռչուն, թո՛ղ քո գրացու թիւնդ ամպերի՛ հետ: Նոյնպէս շուշան ծաղիկին ասան թէ, աղնիւ, ծաղիկ, փուշի ծառ գարձիր, կամ թունաւոր բոյս եղիր: Բայց եւ այնպէս այս աղնիւ ծաղիկն իւր քաղցրանոյշ հոտն կաարածի օդի մէջ, բայց եւ այնպէս արծիւն գէպ ի երկինքը կբարձրանայ, արեւին մօտ տեղերն թեւերը կտարածի: Ի՞նչ է ասածիս պատճառն. այն որ, թէ՛ կենդանի եւ թէ՛ բոյս իւրեանց օրէնքն ունին. այդ օրէնքովն պէտք է գնան, ուրիշ ճանապարհ չունել, իւրեանց համար գրած օրէնքի ճանապարհէն գուրս գալ չեն կարող: Իւրեանց բնական օրէնքն ստացել են իւրեանց Ատեղծողի ձեռքէն, սորա համար այն են, ինչ որ պէտք է լինին, ուրիշ կերպ չեն լինիր:

Եւ մի՞թէ մարդիս հոգին եւս իւր պատուիրանն Աստուծոյ ձեռքէն չէ ընդունել: Ինչ որ պիտի լինի նա եւ ինչ բանի որ կոչուած ու նշանակուած է, նա գիտէ. բայց ոչ ամենայն ժամանակ կատարումէ՛ այն, ինչ որ պիտի անէր իւր կոչմանն ու նշանակութեան համեմատ: Շատերն են կոչուած, բայց քիչերն են ընտրուած:

Կուղենս գու արգեօք գիտենալ մարդկային ազգի մէջ եղած շատ ու շատ վատ բաների, շատ կերպ վատանալու, վշանալու պատճառները: Գու անշուշտ համեմատում ես ու նմանեցնում մարդին մի բոյսի, որոյ ծայրը գէպ ի վեր, գէպ ի երկինքն է գնում, բարձրանում, եւ որոյ արմատը, սահմանուած է

Աստուծոյ, որ հոգի մէջ մտնի ու այնտեղ խոր արմատներ արձակի: Բայց Աստուծոյ այս բոյսը անթիւ, անհամար արարածոց սրբաթիղի մէջ ինքն իրան փշանումէ, երբ որ իւր մէջի կենսական հիւթը (ծուծը) առողջ գրութեան մէջ չէ, կամ, քանի գնումէ ցամաքում, չորանում: Այսպէս է իւր բնական օրէնքէն, իւր համար սահմանուած ճանապարհէն դուրս գալիս ու սխալ կերպով գնում ամեն մի մահականացու մարդ, որպէս եւ ամբողջ ազգեր, իւրեանց նպատակին չգիմելով, երբ որ նոյա մէջ հանգչումէ վառուած, պրծած ճրագի նման առաքինութեան ու ճշմարտութեան լոյս ու տաքութիւն տուող Նիւթն ու զօրութիւնը, ինչ որ անարժան ու ստոր բան է, այն է մեծաւ մասամբ ուրախութիւն ու զուարճութիւն պատճառում մարդոց մեծ բազմութեանը, այս տեսակ մասն որ եւ ինչ ազգի այնպիսի մարդիկ են, որ ոչ բարւոյն եւ ոչ չարին, ոչ առաքինութեան եւ ոչ մոլութեան համար մի որոշ հակումն ու սէր ունին, որովհետեւ սրտի քաջութիւն չկայ մէջները: Գերու նման վախումեն ծեծէն ու պատիժէն, ու սորա համար եւ վատ բանէն հեռու պահում իւրեանց, եւ կարծումն, յոյս եւս ունին, որ այսպիսի իւրեանց ընթացքովն թէ՛ այս աշխարհի վրայ եւ թէ՛ այն աշխարհումն իւրեանց համար լաւ տեղ են պատրաստում ու լաւ օրերի մէջ պիտի լինին: Գոցա բռնած ճանապարհի մէջ ոչ ճշմարիտ հոգւով ու սրտանց սիրել կայ առաքինութիւնը, եւ ոչ սրտանց ատելով գարշել (զգուել) մոլութենէն (վատ գործերէն, մեղքէն): Գոցա մէջ կայ միայն ձգտումն փող աշխատելու, փող շատացնելու, լաւ ապրելու, մեծութեան ու իշխանութեան հասնելու, մի ժամանակ գտնէ անուն հանելու, այս է, որ գրգռումէ, հրապուրում, խիթան տալի ու մղում շատ ու շատ մարդոց, որ շարժին, այս ու այն կողմն ընկնին, այս ու այն եւ շատ բանի ձեռք զարկեն, այս է, որ մեռելի նման քնած մարդոց անգամ զարթնեցումէ, վերկացնում իւրեանց հանգիստ տեղէն ու այլ եւ այլ գործեր անել տալի: Շատ կան արգեօք այնպիսի մարդիկ հազարաւորների մէջ, որ իւրեանց յօժար կամքովն իւրեանց զօհէին արդար, ճշմարիտ բանի համար, ապատութեան ու անմեղութեան եւ սուրբ հաւատոյ համար: Բայց ամեն տեսակ նեղութիւն կքաշեն, կտանեն, իւրեանց գլուխը մահու կուտան՝ իւրեանց ունեցածը, իւրեանց հարստութիւնը

չկորցնելու համար. կամ մի ունայն փայլի ու մի սուտ փառքի համար իւրեանց կեանքը չեն խնայիլ, կրակի ու թուրի առաջը կերթան, ոչ մի վտանգ աչքներին բան չի երեւիլ:

Նոյնպէս կան մեր օրերում բաւական քրիստոնեաներ, որ ոչ իմաստութեան ճանապարհն են բռնել հաստատ կերպով ու գնում, եւ ոչ անմասութեան ճանապարհն են իւրեանց բոլորովին հեռու պահում: սոքա ոչ տաք են եւ ոչ սառն. ուղղման, եւ Աստուծոյ ծառայել, եւ մամռնային. իւրեանց սրտի ուղածին պէս ապրումեն, միանգամայն պահանջումեն, որ միւս կեանքումն եւս ամենալաւ տեղն ունենան: Նոցա չաստուածը (կուռքը), որ պաշտումեն, ժամանակի ամենափոքր կտորն է, մի րոպէն, որ նոցա այս, կամ այն է անել տալի. նոցա կենաց կանոնը, նոցա ընթացքի ուղղութեան լարն, որ բռնումեն ու գնում, կոյր բազմութեան կարծիքն է իւրեանց վերայ. ուժէ ընկնումեն, ամենայն ջանք ու աշխատութիւն քաշելով կամայ աւամայ, ինչ է որ ժողովրդի բազմութեան սովորական եւ ընդունելի ճանապարհ. հովն միայն կարողանային գնալ: Այսպիսի մարդոց սիրտը շատ շուտով է կտրուում, շատ հեշտ են թուլանում ու կորցնում իրանց, որովհետեւ նոքա մարդկանցից շատ աւելի են վախենում, քան թէ Աստուածանից: Նոքա գովելով երկնքին են բարձրացնում, հասցնում հին ժամանակի մեծ մարդոցը իւրեանց թաւրոնների, ճառերի ու գրուածների մէջ. բայց ով որ իւրեանց օրերումն այն մարդոց նման մեծ ու ազնիւ մարդը ճանաչուել համարձակուէր իւր գործերովն, նորա անունն՝ խելքը կորցրած, մոլեռանգն, յափշտակուած օտարոտի մարդ կգնէին եւ ինքն իրան կորցրած մարդու պատիւը կուտային. մինչեւ այսօրս եւս շատ անգամ աւելի փառ, աւելի ամօթ բան է աղքատ լինելը քան թէ վատ հոգու տէր մարդ լինելը. աւելի վտանգաւոր բան է պատառոտած հագուստ ունենալը, քան թէ վատ գաղափարներ, փչացած մտքերի տէր մարդ լինելը:

Այս սաստիկ կերպով ցանկալն ու ջանք անելը, որ հասարակաց կարծիքը իւր վրայ լաւ լինի, մինչեւ անգամ այնպիսի մարդոց է սխալեցնում, որոց մէջը բարւոյ ճանաչումն գեռ եւս ամենեւին մեռած չէ. ընդհանուրի ազդակն այնչափ է բարձրացնում իւր ձայնը, որ ճշմարտութեան ձայնը չի լսուում: Եւ թէեւ, ասենք, լսումեն այս ամէն օր, որ Յիսուս Քրիստոսն իւր

կեանքովն ամենայն մարդոց օրինակ է ու պիտի լինի որպէս եւ իւր Աստուածային խօսքերովն ու գործերով, բայց իւրեանց ամեն կողմումն միայն հակառակ չար օրինակներն են տեսնում ու իւրեանք եւս, չկարողանալով գիմանալ, նոյն ճանապարհովն գնում, ինչպէս որ սրբնթաց գետն իւր մէջն ընկած բան առնումէ, քշում, տանում:

Ժամանակէն է, որ ազնիւ մարդիկ են դուրս գալիս դարձեալ եւ Յիսուսի փրկչի նման, նորա աշակերտների եւ հին ժամանակի իմաստունների նման աւելի բարձր են ճանաչում ու աւելի յարգում յաւիտենական ճշմարտութիւնը, քան թէ ոսկեղօծած թիթեռի նմանող ստութիւնը, յաւիտենական արդարութիւնն ու իրաւունքը, քան իշխանաւորի հպարտութիւնն, յաւիտենական առաքինութիւնն, քան զեղխութիւնն, փափկութիւնն ու հեշտասիրութիւնն, անտիճանների, մեծութիւնի ետեւէ ընկնելը եւ ցած կեղծաւորի ծխած խունին: Այ թէ այնտեղ է կեանքի ճանապարհն, ուր որ բռնի յառաջ մղելով տանումէ մեծ բաղմութիւնն, անմարբար կիրքերից կաշկանդուած, այլ ուր որ կոչումեն մեզ կրօնն ու խղճմտանքն:

«Ո՞վ է, որ յեղ լնաւէլ հարաւանայ, ելիւ որ բարացի, եւ հեռաւանս անց յետ հաւելու: Ելիւ որ արդարութեան համար նեղութիւններ, հաւաքումներ ևս քաշելու լինի, դարձեալ երանելի եւ բաց թէ՛ լնալիւնս և նոյա յամարութիւնն ու զինի լի յեր «իբր թէ երկնալ ընկի:»

Այսպէս է, սիրտ տալով, մեզ ասում բարձր ձայնով սուրբ Առաքեալն Պետրոս՝ զէմ՝ մարգն: Արեւմն սիրտ առէք այն բանի համար, ինչ որ աստուածային է: Աստուծային բանի հետ Աստուած է, ո՞վ կարող է մեզ հակառակ կանգնել: Մի վախենար ամենեւին չարագործէն, այն արհամարհուած մարդէն, որ, ինքն՝ պատիւն կորցնելուց յետոյ՝ քեզ կարհամարհի ու չի պատուի, այլ ծաղրել անգամ մօքէն անց կկայնի: Առանց քաշուելու արա՛ այն, ինչ որ Աստուած հրամայումէ, ինչ որ Յիսուսն է ստիքեցնում, ինչ որ խղճմտանքդ է պահանջում, եւ քո արիւնքս արտութիւնդ չար մարդին վրայ սարսափ կձգի: Վերջը նա իւր խորամանկութիւնով բանալիքած խելքէն ու իւր արած յիմարութենէն ինքն կամաչի: Ով որ չարին է հետեւում, ինչքան ուղի թող յամառի իւր չարամտութեանը մէջ, բայց լաւ կիմա-

նայ յետոյ, որ թոյլ ու անգօր է այն անմիտ անձնաօրութիւնն, որ անխորհրդաբար իւր անձի վրայ է մնուած, իւր անձի վրայ միայն մտածող մարդը կարող է, այո՛, այո ու այն աննշան կերպով իւր անձին մի օգուտ, մի փայլ բերող արդիւնքներ ունենալ, բայց չէ կարող երբէք գիմարտել ճշմարտութեան մեծ հոգիների հոսանքին. նա ինքն եւս չի իմանալ, թէ ինչպէս այդ հոսանքի պտոյտքի մէջ ինքն կուլ կերթայ: Միայն նա, որ Աստուծոյ յանձնուած լինելով՝ հաւատացած, միշտ արխափրա ու աներկիւղ է մնում, նա միայն ալիքների տակ չի մնալ ու միշտ երեսը դուրս կուգայ:

Արեւմտեան արեւոյս, սիրտ առէք առաքինութեան համար: Ա՛յլ է՝ ո՛ւր ձեռքէն կուգայ ձեզ վնասել, դժբաժնի, Աստուծոյ զինուորներ, եթէ որ մինչեւ վերջը գիմանաք ու տինդ կենա՞ք:

Այս քաջասրտութիւնը առաքինութեան համար տալիս է ճշմարիտ քրիստոնէական հաւատն. ոչ թէ կեղծ քրիստոնէութիւն, ոչ թէ կոյր, մնութիւնով ու անձնական շահէն իւր ջգերի ոյժն կորուսած ամբոխի անառնով Ժայն քրիստոնէութիւնն, այն ամբոխի, որ «Տէր, Տէր» է կոչում ու նորա պատուիրաններն չէ պահում. որ Աստուած սիրել է երգում եւ իւր ընկերին, իւր նման մարդին ատում: Աստուծոյ երկրպագութիւն անում, եւ իւր մարմնոյ վատ ցանկութիւններին ծառայում: Այժմեան աշխարհի կրօնական ճշմարտութիւններ ուսուցանող քրիստոնէութիւնն առաքինութեան հետեւելու, առաքինութիւնն գործելու համար ոյժ ու սիրտ տալիս, այլ փրկչի առաջին աշակերտաց քրիստոնէութիւնն, որ հաւատոյ ճշմարտութեան համար, բանական հոգւոյ արգարութեան ու իրաւանց համար, առաքինութեան օրրութիւնը մտնով, խոսքով ու գործով ճանաչելու ու գնահատելու համար անարգանք ու նեղութիւն, ծաղր, արհամարհանք ու մահ անգամ ընդօժենցին: ամենեւին չթուլանալով միանգամայն, կամ իւրեանց համոզմունքը փոխելով:

«Ո՛վ որ է՛մ յեղինէց է ուղիւս՝ Գալ», ասումէր փրկիչն «ուրանայ է-ր անձն, առնէ է-ր խաչը եւ է՛մ բաժակիցս Գալ: Ինչ- ուր, ո՛վ որ է-ր է-անքն ուղիւս պահպանել, կ'որցնէ. Եւայց ո՛վ որ է-ր է-անքն կ'որցնէ ինչ համար, նա (իւր կեանքը) պահպանա՞ծ կ'ընէ»: Այս մեծ կշիռ ունեցող խօսքերի մէջն է գաղտնիքի բանալին այն անյաղթելի

գորութեան, որով բարին չարին յաղթումէ, որքան եւս շատ ոյժ բանեցնի մեր վրայ:

Պինդ բռնիր բարին ու գնա՛ միշտ բարի բան անելու վրայ լինի սիրտդ ու սէրդ. ամենեւին մի՛ մտածիր, հոգ մի անիր թէ ինչ կ'լինի իմ բանս, գլխիս մի բան չգա՞յ: Քո արիասրտութիւնդ քեզանէ է, քո խելքիդ, քո մտքիդ որոշելու, վճռելու բանն է. բայց թէ քո գլխին ինչ պիտի գայ, այդ քո բանը չէ՛, այդ քո երկնաւոր Հօր գործն է, նորա ձեռքէն գալու բանն է:

Աւրացիր քո անձդ. այս խօսքով ուղումեմ ասել քեզ թէ, երբ որ բարի բանն քո ձեռքէդ գալիս է ու կարող ես անել, մի հարցնիլ առաջ ինքդ քեզ թէ, անելու այս գործէս ի՞նչ շահ պիտի ունենամ, կամ թէ, մարդիկ այս իմ անելու գործս ի՞նչ պէս կ'հասկանան, ի՞նչ խրեանց մտքէն կանց կացնեն: Քո միտք անելու բանդ այն է թէ, որովհետեւ Աստուածային բանն Աստուածային է, արդար ու իրաւացի բանն ոչ ոք չէ կարող ասել թէ այնպէս չէ, ծուռ է, սորա համար է, որ անելու բանն պէտք է անես ու մտքումդ ասես թէ, Աստուծոյ ընդունելի արդար ու իրաւացի բանն, որ բարի բան է, ինչո՞ւ պիտի չանեմ, ո՛վ ինչ ուղումէ մտածի, ասի, ես բարի բանն պէտք է անեմ, չեմ կարող չանել: Առաջուանէ մի նստիր այս ու այն բանը միտք անելու, քո մտքովդ հաշիւ անելու թէ, այսպէս, թէ այնպէս կարող է պատահել, որ քո անելու գործիդ տակէն քեզ այս ու այն վտանգը, վնասը դուրս կուգայ. ո՛չ մտածիր, որ քո անելու գործովդ իշխանութիւն ու ոյժ ունեցող մարդոց քեզ հետ չթշնամացնես, ո՛չ մտածիր, որ դու հացդ, պաշտօնդ, տեղդ կ'կորցնես, եւ ո՛չ մտածիր, թէ քեզ երեսիդ վրայ վայր կ'ձգեն, երեսիդ մօտիկ տուող չլինիր: Իրաւացի, արդար բանէն ջոկ, աշխարհիս մէջ ոչինչ մեծ չհամարիս ու չյարգես ամենայն կերպով: Երբոր այս բանը ձեռքէդ կուգայ, այն ժամանակն ես միայն դու ճշմարիտ քրիստոնեայ, ճշմարիտ հետեւող այն բանին, ինչ որ Աստուածային է: Այլ որ երկիւղ չունի, ով որ աներկիւղ քաշում, տանումէ ամենայն բան, ամենքն եւս նորանէ պիտի վախենան, որոնք որ իրանք սիրտ ու քաջութիւն չունին ու երկիւղը խրեանց փորումն է որ, չլինի թէ բանն այնպէս գայ, որ խրեանք շատ բան, կարելի է, կորցնեն: Այլ որ այս տեսակ աներկիւղ, այսպիսի քաջա-

սիրտ մարդ է, նա է յաղթողը, նա կյաղթի։ Ով որ իւր կեանքն սւղումէ պահպանել, նա կկորցնի։ Ով որ մի փափուկ հանգիստ, անլրգով, լաւ կեանք անց կացնելու համար՝ աւելի բարձր, հոգեւոր կեանքէն ձեռք կքաշի, նա այն մարդը կլինի, որ յաւիտենական կեանքը մի բոսկէ՛հ համար ծախումէ։ Բայց ով որ, սուրբ բանի համար, մի փշանալու, ոչինչ ու պնդաւոր բարեք կարհամարհի, նա կկորցնի այն սերմն, որոյ մէջը փռի է միայն, ուրիշ ոչինչ, եւ մի աւելի լու կեանք, պատերազմի մէջ կռուելով ու յաղթելով, կստանայ։

Եթէ որ իսկ արդար ու ճշմարիտ բանի համար ցաւեր, նեղութիւնների, հալածանքների եւս քաշելու լինիս, բայց եւ այնպէս դու երանելի ես։ Ով որ չար ճանապարհներով, խաբէ-բայութիւններով ու հնարագիտութիւններով մեծութիւնների, բարձր տեղերի ու պատիւների է հասել, կարծումես դու, որ կարո՞ւմ է վայելել հանգիստ եւ ուրախ սրտով։ Սուրբ իւրով օծուած մեղաւորն անգամ իւր ծիրանինների, իւր փառաւոր հազուստների տակ դողումէ ճշմարտութեան ուժի առաջին ու հատուցման բոսկէի առաջն, որ վերջապէս ամենի համար պիտի գայ, հասնի։ Կարծո՞ւմես դու, որ անարգ նենգութիւնով ու խորամանկութիւններով եւ այդպիսի ամենացած ճանապարհներով հաւաքած մեծ ինչքն ու հարստութիւնը, որ այդպիսի մի վատ հոգու տէր մարդն ունի, բաղդաւո՞ր է իւրեան համարում, երանո՞ւ տալու մարդ է կարծում իրան։ Ասկու փայլը վերջապէս նորա աչքի առաջին դեղնում է, իւր դեղնութիւնը ցոյց տալով նորան, որ իւր իսկական գոյնն է, բայց իւր ամօթալի գործերի գիտակցութիւնն, որովք նա այդչափ ոսկին դի-դել է, իւր սրտում միումէ ու միսւմ։ Շատ ուրախ կլինէր նա, եթէ, կարողանար, իբրեւ ճշմարիտ ու անստելի բան, մի-անգամ մոքէն անց կացնել ու բերնէն եւս հանել համարձակ թէ՛ Աստուած չկայ աշխարհիս երեսին, կասէր նա այդ, որ իւր սիրտը հանգստացնի։ Բայց խղճմտանքի ցաւն ու կսկիծն՝ իբրեւ ծիծաղելու բան՝ հեռացնել նա կարող չէ ոչ մի ժամանակ, եթէ որ դու մեղաւորին տեսնելի, երբ որ միայնակ է, նորա բոլոր ունեցած փողին ու բաներին ամենեւին աչք չէիր ունենալ, միայն՝ թէ նորա մի բոսկէ քաշածն դու չքաշէիր։

Իսկ դու, Աստուծոյ մարդ, եթէ դու յիրաւի արդարութեան (իրաւացի բանի) համար ես ցաւեր քաշում, պինտ կայ, չթուլանաս: Եթէ որ քո հայրենիքդ եւս քեզ իւր մէջէն դուրս հանի, ձգի, սիրտդ թող չկոտրի, չվախենաս. առաքինի մարդու համար ամենայն տեղ բաց հայրենիք կայ: Եթէ որ կորցնելու լինիս ոյժ ու իշխանութիւն ունեցող մարդոց համարումն քո վրայ, որ լաւ աչքով քո վրայ կնայէին, բանի տեղ մի գնիլ. եթէ որ քո սրտիդ շատ սիրելի հանգամանքները քեզ համար բոլորովին փոխուին, ու քեզ տեսնես ամենավատ դրութեան մէջ, սրտիդ չառնես, մեծ բան չհամարես, առողջ բանտկանութիւնովդ միտք անելով ու մտքիդ որոշումն ու վճիռը տալով թէ՛ ի՞նչ են այն պատիւներն, որ ոչ մի պատիւ չունին, ոչ մի պատիւ ստանալու տեղ չունին: Առաքինութիւնն ամենայն տեղ քո մէջդ սէր կլաւի եւ քո հոգուդ մէջն մի պատիւ կծնեցնի դէպ ի քեզ, այնպիսի մի պատիւ, որ ոչ մի թագաւորական իշխանութիւն ու զօրութիւն քեզանէ խել, քո կամքիդ ընդդէմ ու ուժով քեզանէ առնելով, զրկիլ քեզ քո իսկական ու ճշմարիտ պատուէդ չիկարողանալ: Եթէ որ արդարութեան համար ունեցած, չունեցածդ եւս կորցնելու լինիս եւ աղքատ, խեղճ դռնէ դուռն մանգալու լինէիր մինչեւ քո բերանդ գնելու մի պատառ հացն անգամ օտար երկրներումն պտռելու եւ գտնելու նեղութեան մէջը լինէիր, լաւ խմացիր, որ քո ներքին բարձր զգացմունքդ այն մի կտոր ցամաք հացը մի մեծահաց սեղանի, մի խնջոյթի տեղ կհամարի եւ այնպէս կընդունի. քո չբաւորութեանց մէջ դու աւելի, շատ աւելի բարձր կլինիս, քանի՜ մի աշխարհի հրամայող, մի երկրի վրայ իշխանութիւն բանեցնող մի զօրաւոր թագաւոր: Դու կորցրած կլինիս այն դիզուածներն, որ երկրաւոր բաղդաւորութեան միշտ փոխուող խաղերն են, բայց դու ինքդ քո իսկական բաղդաւորութիւնդ գտած, ձեռք բերած կլինիս. դու աղքատ, շատ բանի կարօտ կլինիս, երեսիգմոխի տուող, սրտիդ ցաւն եւ ունեցած կարիքներդ հասկանալ ուղեցողը չլինիր, բայց եւ այնպէս դու քո հոգւոյդ, քո սրտիդ մէջը բաղդաւոր մարդը կլինիս: Աւրախութեամբ ու պարզերես կարող կլինիս դու քո Աստուծուդ դէպ ի վեր աչքերդ ձգել ու մտիկ տալ որպէս եւ ամեն մի մարդու երեսին համարձակ

նոյնիւ ամենեւին երկիւղ ու ամօթ չբաշելով: Քեզ հալածողները, քեզ յաղթող, ընկճողները, քեզանէ յաղթուած, ընկճուածները կլինին: Դու կլինիս վերջապէս նոյն հալածողն ու նոյն յաղթանակողը: Աստուածահայր Դաւիթ մարգարէի հետ դու եւս կտեսս հանգիստ ու աներկիւղ սրտով: «Աստուած ուրախացնում, մխիթարումէ իմ սիրտս. ինձ ուղիղ ճանապարհով է տանում, իւր անուան համար, Եթէ մութ հովիտների մէջն մտնեամ, ոչ մի փորձանքէ չեմ վախենար: Ինչու որ դու իմ հետս ես. քո ցուպդ ու գաւազանդ, նոքա ինձ մխիթարութիւն եղան: Դու իմ առաջին պատրաստուսն մի վահան թշնամիների դէմը, Դու օծումս իմ գլուխս իւղով եւ ինձ լի բոժակ ես տալի խմելու: Բարին ու ողորմութիւնն իմ յեանէս կուգան մինչեւ իմ մահս եւ ես իմ հօրս յաւիտենական բնակարանի մէջ կմնամ միշտ» (Սաղմոս 23):

Արիացիր, իմ սիրտ, առաքինութեան համար: Արդար ու ճշմարիտ մարդուն համար յաղթութիւնն ու յաղթանակն երբէք չի պակսիլ: Ահ ու գող չընկնի սիրտդ, որ հող ու մոխիր դառնալու բաները եւս ձեռքէդ պիտի գնայ ուրդար ու ճշմարիտ բանի համար: Այլ վախ ունեցիր, որ ճշմարիտ արդար բանն ձեռքէդ փախցրի ու չարլէր: Միթէ դու մի օր կամ մի տարի անցնելուց յառաջ, կամ յետոյ քո ունեցած բոլոր երկրաւոր ինչքդ ու բարիքդ որ պիտի մեռնիս չպիտի թողնես եւ մերկ այս կեանքէս դուրս գտա: Ինչպէս որ այս աշխարհս եկար. բայց մի բարի բանի սրբութիւնն չփչանալ, այլ կմնայ. արդար մարդուն հոմէն կերթան իւր գործերն. Սիրտդ երկիւղ թող չընկնի, իմ պատուական քրիստոնեայ եղբայր, երբ որ բանը գալիս է Աստուծոյ եւ մարդկային ազգի վրայ: Սիրտը գող բռնեւն իւր շահի յեանէն ընկնողների բանն է, որ կապրին իւրեանց մի բարեյաջող բոպէի համար, Ժանգոտելու մեռալի համար, զուարճութիւն բերող հեշտութեան համար, սուա ու կեղծ պատիւ ու մեծարանք, այլոց ոչ թէ տալու՝ այլ ցոյց տալու համար, հոգւոյ թանկագին ախունքի մասին մի զգացումն չունենալուց, որոյ համար մեր կեանքը դնին անգամ մի վաստակ է:

Ինչ որ ուղիղն ու ճշմարիտն է, աներկիւղ սրտով ու հաստատ մօքով առն ու յետ մի կենար: Ար տեղ որ իւր բերանը բաց է անում ճշմարիտն պստլ մի մարդ, նորա հետն եղիր. նորանէ

հեռու քեզ չպահեն. նորա հետ, նորա նման ցաւեր նեղութիւններ քաշիր ու համբերիր. Աստուածանից նորա ստանալու վարձն քո վարձդ եւս է: Խոստովանէ Քրիստոսին, Նա եւս մի օր քեզ կխոստովանի:

« Հրէից թագաւորն ես դու », իւր գաաւորական ակոռէն հարցրեց փրկչին Պիղատոսը. երկրի կառավարին ու խնամակալը, հարցրեց այն Աստուածային մարդուն, որոյ անմեղութեան վսեմ զգայումն իւրեան լաւ յայտնի լինելով, իւր առաջին կանգնած էր: Ամեն կողմէն սաները գետնին էր խփում կատաղութենէն՝ թեթեւամիտ, քամիտ, աղաղակ բարձրացնել, անհանգստութիւն ու ալմուկ հանել սիրտը ամբոխն, ամեն կողմն իւր կատաղութիւնն էր ցոյց տալիս վրէժխնդրութեան համար սիրտները կրակ ընկած գանգատաւորների ու մեղաւորների անդօր ու ցածահոգի խումբն, որ առաքինութիւնն էին մատնում սւ դատաւարտում. Գողգոթան հեռու տեղ չէր, այն սարսափելի տեղն, ուր որ գատալճիւռն էր կատարվում մարդոց գլխին. թուլամորթ Պիղատոսի աչքերի մէջ երեւեցան մի թոյլ սրտի ցաւակցութիւն, ազնիւ հոգուն ազատելու, որոյ վրայ ոչ մի մեղք չէր տեսնում, որոյ մէջ ոչ մի յանցանք չէր գտնում: « Հրէից թագաւորն ես դու », հարցրեց Պիղատոսն եւ յոյս ունէր, որ մի ցածահոգի ու վախկոտ « ոչ » խօսքն լսի իրբիւ նորա բերանէն դուրս եկած պատասխանը, որ ազատի վիճ դատաւարտուածին: Բայց Յիսուս Քրիստոս պատասխանեց իւր քաջ սւ վսեմ հոգւովն ու սրտով թէ՛ այդ խօսքն ես չեմ ասում, այլ քո բերանէն եմ լսում:

Ո՛վ փրկիչ, դու ինձ համար եւս անարգութիւն ու մահ ես ընդունել, Միթէ ես եւս իմ կողմանէ չպիտի քո Աստուածային վեհ ու քաջ սրտովդ ինձ ուրանամ, երբ որ քեզ խոստովանելու տեղն է գալիս: Ո՛ւմ արած սպառնալիքէն պիտի վախենամ ու յետ կանգնեմ, երբ որ բոլոր աշխարհիս գաաւորի առաջին վախ չունիմ: Ո՛վ է կարող ինձ բաղաւորութիւն տալ, կամ ինձանէ խլել, Ո՛չ մարդկային սիրոյ եւ ոչ ատելութեան անելու բանն է այդ: Իմ ներսի կողմի, իմ սրտիս, իմ խղճմտանքիս հանգստութիւնն ու անվրդով խաղաղութիւնն, իմ կողմանէ ինձ մեղադրելու տեղ չունենալս ինձ մարդոյ հաճոյքէն անկասկած, աղահոյ, անկախ ու ազատ դիրք է

տալի, այս՝ Ո՞վ կարող է ինձ պատուի հառցնել, կամ իմ ունե-
ցած պատիւս բանի տեղ չգնել ու ոտնակոխ անել, կարծիք
չկայ, որ իշխանութիւն ձեռքը ունեցող մի մարդու մոքին
եկածն ու սիրան ուղեցածն չէ, որ այդ բանը կարողանայ անել,
կարծիք չկայ, իշխանութիւն եւ ոյժ ունեցող մի մարդու, ինձա-
նէ բարձր եւ իմ վրայ տէր դարձուած մարդու ինձ վրայ լաւ,
կամ վատ աչքով նայելը չէ, որ այդ բանն անի, կամ մի հեշտ
կերպով խաբուող ամբոխի կամքն ու գտտալճիւնն չէ, որ այդ
բանն անել մոքէն անց կացնի, Զէ, իմ բանական հոգուս յաւի-
տենական պատիւն այն առաքինութիւնն է, որ Աստուծոյ ա-
ռաջ գին ու արժէք ունի, իմ մարմինս կարող են սպանել,
բայց իմ հոգիս՝ չէ. ճշմարիտ ու արդար բանն կարող են
ծռել, ծռւն մեկնել, ծռւն ցոյց տալ չարասրտութիւնով, ան-
մեղութիւնն կասկածի տակ ձգել ու ցած հոգի անպիտան,
անարգ սիրտ ունեցող ինձ ձեւացնել. բայց ինչ սեւ սեւ մը-
րըրկի ամպեր եւս, որ արեւի առաջն գան, բռնեն, չեն կա-
րող նորա ճառագայթների լոյսն ոչնչացնել: Ելէ Աստուծոյ իմ
հետ է, ո՞վ է իմող ինչ հաւատալի կեանքն է:

Գ. Ե. Ա.

(Թարգմ.)

ՈՌՈՐԵԼՈՒԹԻՒՆՔ Ի ՀՈՐՈՍՑՆ՝

Պատմութեան մէջ եթէ կայ կետ մի՝ որ երկրայութեան ամե-
նափոքր ստուեր մը իսկ չվերցնիր, եթէ կայ իրողութիւն մը՝ որ
ամեն իրողութիւններէն աւելի անտարակուսելի է, այն ալ սա
է թէ՛ Հայաստանն Հայաստան լինելէն ի վեր, մօտակայ կամ
հեռաւոր ազգերն կամ իւր երկրէն մաս մի կորզել փորձեր են
աշխարհակալութեամբ, կամ եթէ աշխարհակալութեան կողմա-
նէ անդոր են գտնուել, իւր ժողովրդէն մաս մը կորզել փոր-
ձեր են կրօնափոխութեամբ, թողունք որ եղած են ազգեր, որք
լոկ աշխարհակալութեամբ ալ չյագենալով՝ թէ՛ երկիրը կորզե-
լու եւ թէ՛ ժողովուրդը իւր հայրենի կրօնէն դարձնելու ձեռ-
նարկել են:

Աստուծոյ տեղը չէ քննելու թէ՛ Հայաստան լինչ աշխար-
հագրական եւ տեղագրական հանգամանքներ ունի՝ որք ամե-